ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

# ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ՝ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ

## ...ԿՈՒԶԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՐ ԵՐԿՐԻՆ ԱՂԱՅԱՆ ՊԱՐԳԵՎՈՂ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

*Կրկին աշխուժություն, կրկին հավատ ու կրկին ապագայի նոր հարթակ: Հենց նման տրամադրությամբ ենք դիմավորում 2018/2019 ուսումնական տարին Բոլնիս-Խաչենի եւ Կիանեթիի միացյալ կրթօջախներում: Չնայած, որ Կիանեթիի միահարկ շենքում ընդամենը 18 աշակերտ է ուսանում, իսկ առաջին դասարանն ունի ընդամենը մեկ աշակերտ...*



Այդուհանդերձ, օրն անցնում է տոնական ու հանդիսավոր: Երեխաները ոգեւորվածությամբ ասմունքում են, երգում ու պարում: Բոլնիս-Խաչենի դպրոցում այսօր ուսանում է 190 աշակերտ: Առկա են բոլոր դասարանները, բարեբախտաբար, մենք չունենք նաեւ մասնագետի կարիք: Այս տարի իրենց ուսումնառությունը կսկսեն 19 փոքրիկներ, իսկ տարեվերջին դպրոցը կճանապարհի 10 շրջանավարտի: Կուզեի, որ հատկապես այս 10-ը առավել լուրջ մոտեցում ցուցաբերի ուսման եւ իրենց ապագայի հանդեպ: Անցած տարվա 9 շրջանավարտից, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություն են ընդունվել երկուսը, մյուսները կուսանեն երկրի ուսումնարաններում:

Ինչ վերաբերում է դպրոցի վերանորոգչական աշխատանքներին, ապա ասեմ, որ դպրոցը գազիֆիկացված չէ, բայց դասասենյակներում վառարաններ ունենք եւ արդեն ձեռք ենք բերել վառելափայտ:

Վերանորոգված են միայն տանիքն ու պատուհանները, դեռեւս անմխիթար է դռների, հատակի որոշ հատվածների եւ կոսմետիկ հարդարման խնդիրը: Մեզ մտահոգում էր նաեւ դասագրքերի խնդիրը եւ հատկապես 9-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկայից, բայց «Վրաստան» թերթի նախորդ համարից տեղեկացանք, որ հարցը կարգավորված է, եւ դպրոցը մոտ ժամանակներում կստանա անհրաժեշտ ձեռնարկները:

Դպրոցի մանկավարժական կազմի անունից, մեծ սիրով ու լավատեսությամբ շնորհավորում եմ երկրի բոլոր դպրոցականներին, կրթության ոլորտի մշակներին: Կուզեի, որ վերականգնվեր Աղայանաշունչ ու Աղայանածին մեր գյուղի՝ երկրին արժանի զավակներ պարգեւելու բարի ավանդույթը: Տա' Աստված, նմանները մեր դպրոցում շատ լինեն: Շնորհավոր նոր ուսումնական տարի:

***ՀՐԱՆՈՒՇ ԽՈՒԲԼԱՐՅԱՆ***
*Բոլնիս-Խաչեն եւ Կիանեթի գյուղերի հանրային դպրոցի փոխտնօրեն*


ՄԱԳԹԻ MAGTI

**ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ**
ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ,
ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 99 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի խոսակցություն Մագթիկոմի բջջային ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:
www.magticom.ge


## «ԴԱ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ, ԵՎ ՄԵՆՔ ԴՐԱ ԱԿԱՆԱՏԵՍՆ ԵՆՔ»

*Ընթացիկ տարվա սեպտեմբերի 17-ը բացառիկ էր Բաթումիի թիվ 4 վրացական հանրային դպրոցի համար: Առաջին անգամ դպրոցի շեմը հատեցին տեղի հայ երեխաները, ում ծնողները, առաջին անգամ ծովափնյա քաղաքի հայ համայնքի պատմության մեջ, ցանկություն էին հայտնել, որ իրենց երեխաները վրացական դպրոցում սովորեն նաեւ հայոց լեզու:*

- Առաջինդասարանցիների դասավանդման հարցում ոչ մի տարբերություն չի նախատեսվում: Բոլորին կվերաբերվեն միանման՝ ինչպես մեկ օրգանիզմ,- ասաց դպրոցի տնօրեն Մանանա Թավարթքիլաձեն:

Ինչպես նշեց դպրոցի ուսուցչուհի Լիա Թոդրիան, այդ առումով դպրոցն ունի որոշակի փորձ:

- Օրինակ, Աբխազիայի պատերազմից հետո, Սուխումիից մեր դպրոց տեղափոխվեցին Վիկտորյա եւ Դիանա Գաբիսոնիա քույրերը: Կարճ ժամանակում նրանք դարձան լավագույնը իրենց հասակակիցների մեջ, եւ նման օրինակները շատ են:





Գիտեմ, որ հայ երեխաները եւս շնորհալի են, եւ նրանք էլ կդառնան հիանալի աշակերտներ, մեր դպրոցի հպարտությունը:

Ինչպես նշեց Վիրահայոց թեմի Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի ու Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու հոգեւոր հովիվ Արարատ քահանա Գումբալյանը, սա տեղի հայկական համայնքի հիանալի նախաձեռնությունն է.

- Այդ դասարան բացելու նախաձեռնության հեղինակը՝ Վիրահայոց թեմն է: Սույն նախագծի իրականացմանն իրենց օժանդակությունը բերեցին Վրաստանի կառավարությունը, երկրի եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունները: Վերադաս մարմինների հետ միջնորդական արժեքավոր գործունեություն է կատարել հասարակական եւ քաղաքական ճանաչված գործիչ, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, կրթության նախարարության դպրոցների դեպարտամենտը, գերատեսչության փորձագետ Կարինե Մանուկյանը:

12 տարվա ընթացքում այսօրվա հայ փոքրիկները վրաց աշակերտների հետ միասին բոլոր առարկաները կուսուցանեն վրաց լեզվով, միաժամանակ, նրանց կդասավանդվի նաեւ հայոց լեզու եւ գրականություն: Իսկ մյուս տարի, հուսանք, որ նրանց թիվը կկրկնապատկվի: Տեղի համայնքը ստանձնել է այդ դասարանի սաների դպրոց հասնելու եւ դասերից հետո տուն վերադարձնելու հատուկ տրանսպորտի ապահովումը, երկարօրյա խմբի կազմակերպումը, որտեղ ուսուցիչներն աշակերտներին կօգնեն կատարել տնային առաջադրանքները:

Բաթումիի հայ համայնքի վերոնշյալ նախաձեռնությունը ջերմորեն ողջունեց նոր ուստարվա մեկնարկին նվիրված միջոցառմանը ներկա, Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը.

- Դա առաջին անգամ է տեղի ունենում Բաթումիի պատմության մեջ, եւ մենք դրա ականատեսն ենք: Մեր երեխաների ապագայի համար նման նվերի մասին նախկինում շատերն էին երազել, իսկ այսօր դա իրողություն է,- հայտարարեց Եղիշե Սարգսյանը:

Հնչեց առաջին զանգը եւ առաջին դասարանի դասվար Խաթունա Ցինցաձեն, վրաց լեզվի ուսուցչուհի Նանա Մալաղմաձեն եւ հայերենի ուսուցչուհի Սաթենիկ Դանիելյանը երեխաներին ուղեկցեցին դասասենյակ:

***ԹԱՄԱՋ ԳԵՆՁԵԽԱՁԵ***
***ՍԵՅՐԱՆ ԲԱՐՈՅԱՆ***

## ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐԱՊԵՍ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ



Սեպտեմբերի 17-ին Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցում դիմավորեցինք եւս մեկ նոր ուսումնական տարի:

Տեղի ունեցավ «Առաջին զանգին» նվիրված միջոցառում՝ «Գիտելիքը ուժ է» խորագրով: Հնչեցին ողջույնի խոսքեր, շնորհավորանքներ, մեր աշակերտները խանդավառությամբ եւ հուզմունքով արտասանեցին, երգեցին ու պարեցին: Նշեցինք գիտելիքի տոնը, մեծարեցինք ուսումը, քանի որ երկրի ապագան մենք տեսնում ենք կիրթ եւ ուսյալ հասարակության մեջ, որը գնահատում եւ արժեւորում է դպրոցի ու կրթության դերը:

Այս տարի մեր դպրոցն իր գիրկն է առել 20 առույգ ու կայտառ առաջին դասարանցիների, ովքեր մեծ սպասումներով հատեցին դպրոցի շեմը: Նրանց սրտի թրթիռով դիմավորեց դասվար Կանդուխտ Խաչատրյանը:

Շնորհավորանքի իր խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Արտուշ Ուռումյանը՝ մաղթելով ուսուցիչներին եւ աշակերտներին հաջողություններ նոր ուսումնական տարում:

Շնորհավորում ենք մեր կրթօջախի բոլոր երեխաներին, մաղթում նրանց առողջություն, գիտելիքների անսպառ պաշար, հավատ ու համոզմունք առ այն, որ գիտելիքն իսկապես ուժ է եւ մեր բարեկեցիկ ապագայի երաշխիքը:

Շնորհավորում ենք մեր ուսուցիչներին՝ ցանկանալով նրանց համբերություն, պատասխանատվության բարձր զգացում՝ անչափ կարեւոր աշխատանք իրականացնելու բարդ ու երկար ճանապարհին:

***ՄԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ***
*Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի*

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

# ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ՝ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ

## ԱԽԱԼՑԻԽԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԾԱՆՔ

*Ախալցիխե քաղաքի կենտրոնում է գտնվում թիվ 3 հանրային հայկական դպրոցը: Սեպտեմբերի 17-ին դպրոցում առավոտից տիրում էր տոնական տրամադրություն:*

Երգ ու պար, շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ, մեկը մյուսին հաջորդող գեղեցիկ եւ օրվա խորհուրդն ամփոփող բանաստեղծություններ: Տոնական օրվա մեկնարկն ազդարարվեց Վրաստանի ու Հայաստանի օրհներգերով, ապա՝ Ախալցիխեի Հայ Առաքելական եկեղեցու հոգեւոր տեսուչ Տեր Հակոբ աբեղա Սահակյանը, տերունական աղոթքից հետո, կատարեց օրհնության կարգ, որին հաջորդեց դպրոցի տնօրեն Սուսաննա Հակոբովայի ոգեշունչ ելույթն ու շնորհավորանքը, որտեղ կարեւորվում էր գիտելիքը, մարդը եւ կրթությունը: Այնուհետեւ, դպրոցականներին իրենց ելույթներով շնորհավորեցին քաղաքապետարանից ժամանած հյուրերը:

Խոսքով հանդես եկան ռեսուրս-կենտրոնի տնօրեն Խաթունա Խմալաձեն, քաղաքապետ Զազա Մելիքիձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Ախալքալաքիից ու Նինոծմինդայից, Ախալցիխեի սակրեբուլոյի անդամներ Գիորգի Կոպաձեն, Համբարձում Բաբոյանը, Զազա Թամարաշվիլին, ուրիշներ:

Աշակերտներին իրենց ջերմ ողջույններն ու շնորհավորանքները հղեցին հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Ռոզա Զորանյանը, վրաց լեզվի ուսուցչուհի Թինաթին Ծիքվաձեն:

Այդ օրը իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեին «նորաթուխ» աշակերտները՝ առաջին դասարանցիները:

...Անհամբեր փոքրիկներ, հուզված ծնողներ, երջանկությամբ ու սպասումով լի աչքեր:

Նրանց իրենց սիրելի դասվարներ Անահիտ Հարությունյանը եւ Նարինե Կիրակոսյանը շնորհավորեցին եւ ուղեկցեցին դեպի արեւի տեսք ընդունած դասասենյակներ:

Փոխտնօրեն Նարինե Մարաբյանը իր ելույթով շնորհավորեց աշակերտներին՝ մաղթելով նրանց նորանոր հաջողություններ կրթության եւ գիտության ասպարեզում, որից հետո հնչեց առաջին զանգը:

«Վրաստան» թերթի ընթերցողին ասենք, որ մեր դպրոցը կառուցվել եւ հիմնադրվել է 1980 թվականին: Վրաստանի կառավարության կողմից դպրոցի շենքը մի քանի անգամ վերանորոգվել է: Ասենք նաեւ, որ 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում, դպրոցի տնօրինության խնդրանքով, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հիմնովին վերանորոգեց ջեռուցման համակարգը:

Այժմ նախարարությունը խոստացել է վերանորոգել շենքի էլեկտրաէներգիայի սիստեմը:

Դպրոցում ստեղծված է հաճելի աշխատանքային միջավայր եւ առողջ մթնոլորտ:

Դասավանդող բոլոր ուսուցիչներն ակտիվ մասնակցում են վերապատրաստման դասընթացներին: Նրանցից 10-ը հաջողությամբ հանձնել են քննությունները եւ ստացել ավագ ուսուցչի կոչում:

Ամեն տարի աշակերտները ակտիվ մասնակցում են թե' դպրոցական, թե' կրթության ու գիտության նախարարության կողմից կազմակերպված բոլոր օլիմպիադաներին եւ հաղթանակների հասնում:

2018-2019 ուստարում դպրոցի 63 շրջանավարտից 26-ը հաջողությամբ հանձնել են ազգային միասնական քննությունները եւ ընդունվել բուհեր: Հովհաննես Պետրոսյանը, Անդրանիկ Մկոյանը, Ազատ Ֆարմանյանը, Աննա Կիրակոսյանը, Ռաֆայել Կռնաջյանը ստացել են բարձր միավորներ եւ պետության կողմից արժանացել 100% ֆինանսավորման:

Այժմ դպրոցում սովորում է 640 աշակերտ:

***ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ***
*Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցի դասվար*

## ԾԱԼԿԱՅԻ ՆԱՐԴԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՍԿԻԶԲԸ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՎԱՏՈՎ

Նոր ուսումնական տարին որքան էլ ավետաբեր, այդուհանդերձ, մտահոգության տեղիք է տալիս: Մի հանգամանք, որ երեւի հատուկ է այն դպրոցներին, ուր խնդիրներ կան, այն էլ՝ տարիների ընթացքում անլուծելի: Ցավոք, նմանները դեռ շարունակում են իրենց անմխիթար գործունեությունը՝ իրենց նվիրյալ մանկավարժներով, ովքեր ջանք չեն խնայում երեխաներին կրթելու իրենց առաքելության մեջ: Ուստի, մեր շնորհավորանքն ու բարեմաղթանքը՝ նախ նմաններին, ապա՝ նաեւ համայն Վրաստանի դպրոցականներին ու մանկավարժներին: Թող տարին ուսումնառատ լինի, նվաճումներով ու դրական տեղաշարժերով լի:

Ծալկայի մունիցիպալիտետի Նարդեւան եւ Այազմա գյուղերի հանրային դպրոցները միացյալ են, եւ աշակերտների ընդհանուր թիվն այստեղ 189-ն է, որից 155-ը Նարդեւանում եւ ընդամենը 34-ը՝ Այազմայի դպրոցում են սովորում: Աշակերտների թիվը փոքր է: Իսկ սա խոչընդոտում է ֆինանսական բավարար կարողություններ ունենալ:

Մեր միացյալ դպրոցն այսօր 14 առաջին դասարանցի ունի եւ ավարտական դասարանի 12 աշակերտ: Մենք մի քանի անգամ դիմել ենք նախարարությանը կրթօջախին հուզող հարցերին աջակցելու համար: Սակայն, առայսօր խնդիրների լուծմանը ընթացք չի տրվել: Մինչդեռ, դպրոցը տասնյակից ավելի տարիներ չի վերանորոգվել, չունի մարզադահլիճ, սանհանգույց...

Դասագրքերի հարցը, հատկապես՝ «Հայոց լեզու եւ գրականություն» առարկաներից, շարունակում է մնալ առաջնայինը: Վաղուց է՝ գրքերի նոր պարունակություն չի ներկրվել, եւ «Վրաստան» թերթի միջոցով խնդրում ենք համապատասխան կառույցներին օգնել մեզ այդ խնդրի լուծման մեջ:

Դպրոցն ունի 14 առաջին դասարանցի եւ ավարտական դասարանի 12 աշակերտ, ովքեր համոզված ենք, շարունակելու են բարձր պահել իրենց հարազատ կրթօջախների եւ բնօրրանի պատիվը:

***ԱՂԱՍԻ ՆՈՒՐԲԵԿՅԱՆ***
*Ծալկայի մունիցիպալիտետի Նարդեւան եւ Այազմա գյուղերի հանրային դպրոցի տնօրեն*

## ՍԱԲԱԹԼՈ. ԿԱԽԵԹԻԻ ԱՄԵՆԱՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ



Կախեթիի հարավարեւելյան մասում Ալազան գետի աջ ափից 1-2 կմ հեռավորության վրա 1923 թվականից ի վեր գոյություն ունի մեր Սաբաթլո գյուղը:

Հասկանալու համար, թե ինչպես է ծնունդ առել այս հայաբնակ գյուղը, ստիպված ենք թերթել շուրջ հարյուր տարվա վաղեմություն ունեցող վավերագրերը:

Մինչեւ 1918 թվականը, մեզնից ոչ հեռու Ադրբեջանի տարածքում գտնվող Շաքիի գավառում 17 հայաբնակ գյուղ կար, որոնցից մեկը Սաբաթլոն էր, որի բնակիչների նախնիները գաղթել էին Արցախի Խաչեն եւ Ջրաբերդ գավառներից: Սակայն, նրանց վիճակված չէր իրենց խաղաղ գոյությունը պահպանել հայրենի ծննդավայրում: 1918 թվականին օսմանյան բանակի զորամիավորումները, որոնք ներխուժել էին Շաքիի գավառ, հասան նաեւ Սաբաթլո: Գյուղի բնակիչները բռնեցին գաղթի ճամփան: Միանալով հարեւան գյուղի գաղթականներին՝ փախան դեպի Ալազանի գետը: Գետի ափին նրանք ենթարկվեցին բազմաթիվ բռնությունների, խոշտանգումների ու թալանի, ընկան սովի ու հիվանդությունների ճիրանը: Բնակչության մի աննշան մասը, ում հաջողվեց մի կերպ անցնել Ալազանի աջ ափը եւ հասնել Ցարսկիե Կոլոդցի ավան, մի քանի ծանրագույն տարիներ անցկացնելուց հետո, հիմնեցին Սաբաթլո գյուղը, որը կոչեցին իրենց կորցրած գյուղի անունով: Գյուղի նշանավոր իրադարձություններից մեկը եղավ հայկական դպրոցի հիմնումը, որը գործում է մինչեւ այսօր: Տասնամյակների ընթացքում դպրոցը տվել է բազմաթիվ շրջանավարտներ, որոնցից շատերը բարձրագույն կրթություն են ստացել ինչպես Վրաստանի, այնպես էլ՝ Հայաստանի բուհերում: Ցավոք, տարեցտարի նվազում է դպրոցի աշակերտների թիվը, երիտասարդ ընտանիքներից շատերը հեռանում են գյուղից: Եթե 90-ականների սկզբին դպրոցն ուներ 100-120 աշակերտ, ապա այժմ՝ ընդամենը 58:

Այս ուստարվա սեպտեմբերի 17-ը կրկնակի տոն էր սաբաթլոցի աշակերտների եւ, իհարկե, ուսուցիչների ու ծնողների համար, որովհետեւ նրանք ոտք դրեցին գեղեցիկ վերանորոգված ու կահավորված մեր դպրոց: Հատկապես ուրախ էին առաջին դասարանցիները: Այս տարի նրանք հինգն են, որոնք ուստարվա հանդիսավոր բացմանը իրենց գեղեցիկ արտասանություններով ու երգերով ողջունեցին հավաքվածներին:

***ԳԵՆԱԴԻ ՉՈՎՈՒՇՅԱՆ***
*Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետի Սաբաթլո գյուղի հանրային դպրոցի տնօրեն*

## «ԳԻՏԵԼԻՔԸ ՈՒԺ Է»



Դամալայի հանրային դպրոցը նոր ուստարվա մեկնարկի կապակցությամբ կրկին բացեց իր դռները՝ ընդունելու իր սաներին եւ 18 առաջին դասարանցիներին, ովքեր առաջին անգամ ոտք դրեցին դպրոց: Սերունդները գալիս են ու անցնում՝ կրթօջախին թողնելով մանկական անհոգությունը, լիաթոք ծիծաղը, երջանիկ պատանեկության հուշեր ու քաղցր հիշողություններ: Անցյալ ուսումնական տարում Դամալայի հանրային դպրոցը ուներ 10 շրջանավարտ: Նրանք ընդունվել են Վրաստանի եւ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դամալայի հանրային դպրոցում միշտ էլ կպահպանվի սովորողների ուսման հանդեպ ունեցած սերն ու խանդավառությունը:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ շնորհավորում եմ բոլորին. հատկապես դպրոցի եւ բուհի շեմն առաջին անգամ ոտք դնողներին՝ նրանց մաղթելով լուսավոր ճանապարհ եւ բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին, ում վստահված է սերունդների կրթության եւ դաստիարակության դժվարին գործը, հաջողություններ իրենց աշխատանքում:

Իմ երախտիքի եւ շնորհակալության խոսքը կհղեմ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը, կրթական ռեսուրս-կենտրոնին՝ աշակերտներին դասգրքերով, իսկ առաջին դասարանցիներին անհատական նոութբուքերով ապահովելու համար:

Մաղթում եմ ձեզ հաջողություններով ու ձեռքբերումներով լի նոր ուսումնական տարի:

***ՆԵԼԼԻ ԴՈՒԴՈՒԿՉՅԱՆ***
*Ասպինձայի ունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային դրոցի տնօրեն*

## ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԱՊՐԱԾ ԴՊՐՈՑՈՒՄ

*Ցնծություն, ուրախություն եւ խանդավառութուն է տիրում Վրաստանի հինավուրց եւ փոքրիկ հայաբնակ գյուղում՝ Նորգյուղում (Միրզոեւկայում):*

Ուրախության պատճառը մեկն է՝վերածնունդ ապրած դպրոց: Իսկապես, երբեմնի խղճուկ ու խարխուլ դպրոցն այսօր վերանորոգվել ու հպարտ կանգնել է գյուղի կենտրոնում, ինչպես մի անառիկ բերդ: Քանի՜-քանի սերունդներ է կրթել ու կյանքի ճիշտ ուղի ցույց տվել այս փոքրիկ դպրոցը: Դպրոցն է, որ հայեցի է պահում գյուղը, որտեղ տարբեր ազգություն ունեցող մարդիկ իրար հետ հաղորդակցվում են հայերեն: Ես ուզում եմ խորին շնորհակալությունս հայտնել առաջին հերթին Ծերեթելու հանրային դպրոցի փոխտնօրեն Վանիկ Հարոյանին՝ մեծ ազգասեր ու իր գործին նվիրված մի անձնավորություն, ով ոչ մի ջանք ու եռանդ չի խնայել դպրոցի պահպանման գործում: Նա ամբողջ ամառային արձակուրդն անցկացրել է դպրոցում: Լուսաբացից մինչեւ ուշ երեկո հետեւել է վերանորոգման աշխատանքներին: Նրա շնորհիվ է, որ այս նոր ուսումնական տարին կանցկացնենք նոր, լուսավոր եւ գեղեցիկ դասասենյակներում: Ուզում եմ գյուղի համայքի եւ ուսուցչական կազմի անունից խորին երախտագիտություն հայտնել նաեւ մեր մեծ բարերարներին՝ «Կարիտաս» բարեգործական ընկերությանը եւ «Շեն Ջորջիա» կոնցեռնին, որոնց բարի կամքով վերանորոգվեց դպրոցը:

Ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությանը ելույթ ունեցան եւ դպրոցականներին, ուսուցիչներին ու ծնողներին ողջունեցին դպրոցի տնօրեն Մարինա Մաճարաշվիլին, փոխտնօրեն Վանիկ Հարոյանը, Քվեմո Քարթլիի նահանգապետ Շոթա Ռեխվիաշվիլին, Մառնեուլիի քաղաքապետի պաշտոնակատար Զաուր Տաբատաձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

***ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԻՋՈՅԱՆ***
*Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելի գյուղի հանրային դպրոցի Միրզոեւկայի մասնաճյուղի անգլերենի ուսուցչուհի*



# 2018 թվականի **հոկտեմբերի 28-ին** տեղի կունենան Նախագահի ընտրություններ

არჩევნები 2018

ცესკო
საქართველოს
საარჩევნო
ადმინისტრაცია

## Ստուգե՛ք տվյալները Ընտրողների միասնական ցուցակում

համակարգչի, պլանշետի,
բջջային հեռախոսի,
արագ վճարման սարքի միջոցով



*Ժողովրդավարության ծառայություն*

საარჩევნო სისტემების
განვითარების, რეფორმებისა და
სწავლების ცენტრი

*Մենք խոսում ենք ընտրողների հետ*

WWW.VOTERS.CEC.GOV.GE




Մուտքագրե՛ք ձեր
անձնական համարը
Մուտքագրե՛ք ձեր
ազգանունը

Քարտեզի միջոցով
տեսե՛ք, թե որտեղ
պետք է քվեարկեք




**Նկատի՛ ունեցեք՝**

ցուցակի մեջ
փոփոխությունների կատարում
հնարավոր է պահանջել
**մինչև հոկտեմբերի 10-ը**

WWW.VOTERS.CEC.GOV.GE

Գտի՛ր ինքդ քեզ
Գտի՛ր քո ընտրատեղամասը

WWW.CESKO.GE ☎ 995 32 2 51 00 51

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ



*Սեպտեմբերի 21-ին Հայաստանը նշում է Անկախության օրը: Հաստատված ավանդույթի համաձայն, Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Հայաստանի Անկախության 27-րդ տարեդարձի կապակցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն:*

«Եռաբլուր»-ում էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը, Արցախի նախագահ Բակո Սահակյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Նրանք ծաղիկներ դրեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին եւ ծաղկեպսակ՝ հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին:

Վեհափառ Հայրապետի կողմից հնչեցվեց աղոթք:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

*Հայաստանի Անկախության 27-րդ տարելիցի առթիվ արտասահմանյան մի շարք երկրների ղեկավարները շնորհավորական ուղերձներ են հղել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:*

Մասնավորապես, Հայաստանի Անկախության տոնի առթիվ երկրի ղեկավարությանը շնորհավորել են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը, պետքարտուղար Մայք Պոմպեոն, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Չինաստանի ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ծինփինը, Պետական խորհրդի վարչապետ Լի Կըցյանը, Նորին Մեծություն Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի Էլիզաբեթ Երկրորդը, Ուկրաինայի նախագահ Պետրո Պորոշենկոն, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնը, Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը, Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) նախագահ Խալիֆա բին Զայեդ ալ Նահյանը, ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, Դուբայի կառավարիչ Մուհամմադ բին Ռաշիդ ալ Մաքթումը, Աբու Դաբիի արքայազն, ԱՄԷ զինված ուժերի գերագույն փոխհրամանատար Մուհամմադ բին Զայեդ ալ Նահյանը, Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար ալ Ասադը, Ավստրալիայի Միության գեներալ-նահանգապետ Փիթեր Քոսգրովը, Շվեյցարական կոնֆեդերացիայի նախագահ Ալեն Բերսեն, պաշտոնական այլ անձինք:

## ՆՇՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ



*Սեպտեմբերի 20-ին Հայաստանի Ազգային ժողովի բակում նշվում է խորհրդարանի ձեւավորման 100-ամյա հոբելյանը:*

Տոնական միջոցառմանը ներկա են Հայաստանի եւ Արցախի նախագահներ Արմեն Սարգսյանը եւ Բակո Սահակյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը, երկու հայկական հանրապետությունների խորհրդարանների նախագահները, ինչպես նաեւ ՀՀ Գերագույն խորհրդի եւ ՀՀ Ազգային ժողովի առաջինից վեցերորդ գումարումների պատգամավորները:

Միջոցառմանը ելույթ ունեցավ ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը:

Հոբելյանական միջոցառման շրջանակում, ցուցադրվեց Հայաստանի խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված տեսաֆիլմ, որում ներկայացված է խորհրդարանի ստեղծման եւ գործունեության պատմությունը:

Այնուհետեւ, հյուրերը այցելեցին Ազգային ժողովի վարչական շենքում տեղակայված Ազգային ժողովի նորաբաց թանգարան, ներկա գտնվեցին նիստերի դահլիճից կից սրահում կազմակերպված ֆոտոցուցահանդեսին:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ողջունելով հյուրերին՝ Հայաստանի վարչապետը հույս հայտնեց, որ Հայաստան այցի ընթացքում նրանք հնարավորություն կունենան առավել մանրամասն ծանոթանալ ոչ բռնի, թավշյա հեղափոխությունից հետո մեր երկրում տեղի ունեցող զարգացումներին: Գործադիրի ղեկավարն ընդգծեց, որ Հայաստանի կառավարության քայլերն ուղղված են երկրում ժողովրդավարության զարգացմանն ու ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի առաջ բոլորի հավասարության ապահովմանը, քաղաքացիական հասարակության զարգացմանը, կառավարման համակարգի բարելավմանը:

Այնուհետեւ, վարչապետը պատասխանեց դեսպանների մի շարք հարցերին, որոնք վերաբերել են երկրում խորհրդարանական ընտրությունների անցկացմանը, Հայաստան-Վրաստան, Հայաստան-ԵՄ հարաբերություններին, վերջինիս հետ ստորագրված Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության մասին համաձայնագրի իրականացմանն ու դրանով նախատեսված առաջնահերթություններին, տարածաշրջանային էներգետիկ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացմանը, զբոսաշրջության զարգացմանը եւ այլ թեմաների:

Ավելացնենք, որ ճանաչողական այցով Հայաստանում գտնվող Վրաստանում հավատարմագրված շուրջ երկու տասնյակ երկրների դեսպաններն այցելեցին Մատենադարան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Այցի շրջանակներում, Վրաստանում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպում ունեցավ նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը: Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ԱԳՆ ղեկավարը հույս հայտնեց, որ նման այցերը կլինեն պարբերական եւ կխթանեն բարեկամական երկրների հետ համագործակցության հետագա խորացումը: Նա դեսպաններին ներկայացրեց Հայաստանում տեղի ունեցած վերջին ներքաղաքական զարգացումները, կառավարության ծրագրի արտաքին քաղաքական առաջնահերթություններն ու գերակայությունները:

## ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է ՀԻՆ ՆՄՈՒՇԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ




*Հայաստանի կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված, այսպես կոչված, հին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը նախատեսվում է երկարաձգել՝ 2019թ. հունվարի 1-ի փոխարեն՝ սահմանելով մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը:*

Ըստ հիմնավորման, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» եւ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներով սահմանված է, որ հին նմուշի անձնագրերը ՀՀ քաղաքացիներին տրամադրվելու են մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը, ինչը ենթադրում է, որ հունվարի 1-ից հետո ՀՀ քաղաքացիներին կարող են տրամադրվել բացառապես կենսաչափական անձնագրեր:

Ակնկալվում է, որ փոփոխությունը հնարավորություն կտա մինչեւ կենսաչափական անձնագրերի համակարգի նոր մատակարար ընկերության լիարժեք աշխատանքը՝ ապահովել ՀՀ քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացը:

### ԱՅՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ

***Սեպտեմբերի 21-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել Հայաստանի վետերանների միավորում, հանդիպում ունեցավ վերջինիս անդամներին: Միավորման խորհրդի նախագահ Սիմոն Եսայանը ներկայայցրել է իրենց գործունեությունը եւ անդրադարձել վետերաններին հուզող տարբեր խնդիրների:***

***Վարչապետը ողջունել եւ շնորհավորել վետերաններին Հայաստանի Անկախության 27-րդ տարեդարձի առթիվ եւ ընդգծել, որ պետությունը պետք է արժանվույն կերպով գնահատի այն վաստակը, որոնք վետերաններն ունեն հայրենիքի առաջ:***

***Նիկոլ Փաշինյանի խոսքով, կառավարությունը բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի Հայաստանի վետերանների միավորումը պատշաճ մասնակցություն ունենա Հայրենական մեծ պատերազմի տարեդարձի տոնակատարություններին:***

***Գործադրի ղեկավարը հավելել, որ վետերանների բարձրացրած խնդիրները կքննարկվեն կառավարությունում եւ, ըստ առաջնահերթության, դրանց կտրվեն համապատասխան լուծումներ:***

### ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՃ

***2018 թվականի հունվար-օգոստոսին Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 7,7 տոկոս:***

***Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 4,4 տոկոսով, շինարարության ծավալը՝ 8,5, առեւտրի շրջանառության ծավալը՝ 9,7 տոկոսով: Զգալի աճ է գրանցվել ծառայությունների ոլորտում՝ կազմելով 18,9 տոկոս: Փոքր-ինչ նվազում է նկատվում գյուղատնտեսության ոլորտում. մասնավորապես, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, 2017 թվականի հունվար-օգոստոսի համեմատ, նվազել է 1 տոկոսով:***

***Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 2018 թվականի հունվար-օգոստոսի ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 1,3 տոկոսով, սպառողական գների ինդեքսի ցուցանիշն աճել է 2,5 տոկոսով:***

***Արտաքին առեւտրաշրջանառության ծավալի աճն ընթացիկ տարվա առաջին 8 ամսում կազմել է 26,4 տոկոս. մասնավորապես, արտահանումը՝ 16,5, ներմուծումը՝ 32 տոկոս:***

### ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԿԱՆԱՉ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ԱՐՇԱՎԸ

***Սեպտեմբերի 18-ին պաշտոնապես մեկնարկել «Կանաչ նախաձեռնություններ» արշավը, որի նպատակն է բարձրացնել էկոլոգիական գրագիտության աստիճանն ու խթանել մարդկանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին:***

***Արշավն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) եւ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության եւ իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակում՝ ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ:***

***«Կանաչ նախաձեռնություններ» արշավի մեկնարկն ազդարարվել Երեւանի Հյուսիսային պողոտայում (ցայտաղբյուրների հարակից տարածքում) տեղակայված էկոտաղավարի բացման արարողությամբ, որին մասնակցեցին Հայաստանի բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար Դմիտրի Մարիասինը:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՍԵՊՏԵՄԲԵՐ



***25.09.2018 Սուրբ կույսեր Փեփրոնեի, Մարիանեի եւ Մեծ Վարդանի դստեր՝ Շուշանի հիշատակության օր***

Սուրբ Շուշանը Վարդան Մամիկոնյանի ավագ դուստրն էր, որին նախապես Վարդենի էին կոչել, բայց հայոց պատմության եւ վարքաբանության մեջ հայտնի է Շուշան փաղաքշական անունով: Նա ամուսնացած էր վրաց Աշուշա բդեշխի որդի Վազգենի հետ: Ձնաժ նրանք 3 տղա եւ 1 աղջիկ ունեին, սակայն ամուսինը, բդեշխ դառնալով, կրոնափոխ էր եղել  եւ ամուսնացել պարսիկ Պերոզ իշխանի զոքանչի հետ: Իսկ Շուշանը եկեղեցուն կից մի փոքրիկ տնակում ապրում էր աղոթքներով՝ միշտ մերժելով իր ամուսնու՝ դավանափոխ լինելու առաջարկներն ու սպառնալիքները: Սուրբ Շուշանիկը 7 տարի անընդմեջ իր ամուսնուց հալածվում է՝ ապավինելով միայն իր աներեր հավատին առ Աստված եւ պապից՝ Սուրբ Սահակից, իրեն կտակված Սուրբ Ավետարանին: Սուրբ Շուշանը 470 թվականին իր կյանքն ավարտում է մարտիրոսական մահով: Ըստ Ոխտանես պատմիչի, նրա գերեզմանը Ցուրտավում է:

***29.09.2018 Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի, Աղոկտոսի եւ Ռոմանոս Երգեցողի հիշատակության օր***

***30.09.2018 Վարագա Սուրբ Խաչի տոն***

Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նշում են Խաչին նվիրված տոները: Բայց ի տարբերություն մյուս եկեղեցիների, Հայ եկեղեցին ունի նաեւ Խաչին նվիրված զուտ ազգային մի տոն, որը հայտնի է Վարագա Սուրբ Խաչ անունով: Այն միշտ տոնում են Խաչվերացից երկու շաբաթ հետո, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը հանդիպող կիրակի օրը:

## ՏԱՐԵՐՔ

### ԵՐԿՐԱՇԱՐԺ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



Սեպտեմբերի 20-ին 3 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Վրաստանի մայրաքաղաքից 3 կմ հեռավորության վրա: Այդ մասին ասված է Սեյսմիկ մոնիթորինգի ազգային կենտրոնի կայքում:

Ստորգետնյա ցնցումները գրանցվել են Թբիլիսիի ժամանակով ժամը 15:13-ին:

Երկրաշարժի օջախը գտնվում էր 10 կմ խորության վրա:

Տուժածների վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել:

## ՆՈՐ ՕՋԱԽ

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

***Սեպտեմբերի 21-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք, ուր ներկաները միասնաբար աղոթք բարձրացրեցին հանուն Հայաստանի Հանրապետության ամրության, խաղաղության ու բարօրության:***

Արարողությանը ներկա էին Վրաստանում Հայաստանում արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը եւ դեսպանության անձնակազմը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Ալիք Մեդիա» լրատվական գործակալության հիմնադիր Արսեն Խառատյանը, գրողթարգմանիչ Գիվի Շահնազարը, հայկական կազմակերպությունների ղեկավարներ, մտավորականության ներկայացուցիչներ:

Հանրապետական մաղթանքին հաջորդեց եկեղեցու մերձակա տարածքում՝ Սամղեբրո 5 հասցեում, թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանի եւ IDeA հիմնադրամի ղեկավար Ռուբեն Վարդանյանի աջակցությամբ բացվող հայկական նոր օջախի՝ Երիտասարդական եւ համայնքային կենտրոնի տնօրհնեքը: Վրաստանի տարածքում՝ Թբիլիսիում, Ախալքալաքում, Նինոծմինդայում, Բաթումիում եւ Ռուսթավիում թեմի հովանու ներքո գործող կրթամշակութային կենտրոնների շարքում, այս նորը թվով ութերորդն է: Այն իր առաքելությունը սկսում է՝ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը կրելով, ում 110-ամյակը նշվեց սեպտեմբերի 20-ին: Կենտրոնը ծառայելու է քրիստոնեա-դաստիարակչական, մշակութային ու կրթական տարբեր երիտասարդական ծրագրերի եւ հանդիպումների: Սրահում գործելու է գրադարան, ընթերցասրահ: Երիտասարդական եւ համայնքային կենտրոնն աշխատելու է 10:00-18:00, ամեն օր, բացի երկուշաբթիից:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍ



***Սեպտեմբերի 21-ից, ուրբաթ եւ շաբաթ օրերին, 00:00-ից մինչեւ 06:00, «Ախմետելիս թեատրի» մետրոկայարանից «Վարկեթիլի» մետրոկայարան երթեւեկելու է ավտոբուս: Երթուղին մշակվելու է «Գիշերային էկոնոմիկա» նախագծի շրջանակներում:***

Պիլոտային նախագծի մասին հայտնեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

- Մենք ասում էինք, որ «Գիշերային էկոնոմիկայի» զարգացման շրջանակներում, անհրաժեշտ եւ կարեւոր է, որ գիշերվա ժամերին, կոնկրետ տեղավայրերում երթեւեկի մունիցիպալ տրանսպորտ: Նշված որոշումը կայացվել է, եւ սեպտեմբերի 21-ից, ամեն ուրբաթ եւ շաբաթ օրը, 00:00-ից մինչեւ 06:00, «Ախմետելիս թեատրի» մետրոկայանից մինչեւ «Վարկեթիլի» երթեւեկելու է ավտոբուս: Մեզ համար եւս հետաքրքիր է, թե ինչպես է իրագործվելու պիլոտային նախագիծը: Կարծում եմ, շատ հարմար կլինի, ինչպես գիշերային կյանքի սիրահար երիտասարդների, այնպես էլ՝ զբոսաշրջիկների եւ գիշերաժամերին աշխատող քաղաքացիների համար,- հայտարարել է Կախա Կալաձեն:

Ավտոբուսը երթեւեկելու է «Ախմետելիս թեատրի» մետրոկայարանից եւ առաջին կանգառը լինելու է Դիդի Դիղոմիում, «Գուդվիլի» սուպերմարկետի մոտ:

Պիլոտային երթուղիով «Ման» տիպի ավտոբուսները կերթեւեկեն մեկ ժամ ընդմիջումով, տոմսի արժեքը կլինի 50 թեթրի:

## ՖՈՒՏԲՈԼ

### ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

FIFA World Rankings

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է աշխարհի երկրների ազգային հավաքականների դասակարգման նոր աղյուսակը:

Նոր աղյուսակում Վրաստանի հավաքականը առաջադիմել է երեք հորիզոնականով եւ ներկայումս հանգրվանել 93-րդ տեղում: Հայաստանի հավաքականը պահպանել է իր դիրքերը, այն, ինչպես նախորդ աղյուսակում, 100-րդն է:

Վարկանիշային աղյուսակը հավասար՝ 1729 միավորով, գլխավորում են Բելգիայի եւ Ֆրանսիայի հավաքականները: Երրորդ տեղում Բրազիլիայի ազգային ընտրանին է: 10 լավագույն հավաքականների շարքում են նաեւ Խորվաթիան, Ուրուգվայը, Անգլիան, Պորտուգալիան, Շվեյցարիան, Իսպանիան, Դանիան:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հանրահայտ արվեստագետ, ոսկերիչ, նկարիչ, դիզայներ ... Նուռ: 6.Հացաբույսի տեսակ: 9.Ճակատամարտի վայր Տղմուտ գետի ափին: 10.Մարտարվեստի զենք: 11.Կտրիճ, քաջ: 12....-կովկասյան լեզվաընտանիք: 13.Քաղաք Ռուսաստանում: 16.Ցուցական դերանուն: 17.Հայ վրիժառու, ով Բեռլինում 1922թ. սպանեց Ջեմալ Ազմիին՝ ... Երկանյան: 19.Ստալինի ծննդավայր քաղաքը Վրաստանում: 20.Ջրլող գեղեցիկ թռչուն: 23.Հովսեփ Վարդանյանի հայերեն տառերով թուրքերեն վեպը: 25.Գ.Սարյանի հերոսուհու գործածը: 28.«... ասաց՝ ես, կաղնին էլ թե՝ ես» («Արծիվն ու կաղնին» առակից): 31.Գեղեցիկ, հոտավետ ծաղիկ: 33.Սիբիրը նվաճողը ... էր: 34.Հայկական իգական անուն: 35.Ժխտական նախածանց: 38.Հոմերոսի հերոս: 41.Պակաս, քիչ: 43.Գարնան ամիս: 45.Ֆրանսիացի հանրահայտ դերասան ... դը Ֆյունես: 46.Փոքրացուցիչ մասնիկ: 47. Նանայցի որսորդ ... Ուզալա: 49.Երաժշտական գործիք: 51.Համի տեսակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կանադահայ հայտնի դերասանուհի ... Խանջյան, կինոռեժիսոր Ատոմ Եգոյանի կինը: 2.Գր.Զոհրապի գրական կեղծանունը Ֆրանսիայում՝ ... Լեար: 3.Սեղանի խաղ: 4.Նար-Դոսի գրական հերոսուհի: 5.Սուրբ ... Աստվածածին, Սուրբ Աննայի դուրստրը: 6.Նորից, էլի, դարձյալ: 7.Ժամանակի միավոր: 8.Թբիլիսիից ոչ հեռու վայր, ամառանոց: 14.Հովհ.Թումանյանի ստեղծագործություններից՝ «Թագավորն ու ...»: 15.Քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 18.Հերոս «Ինչու է աղմկում գետը» ֆիլմում: 19.Հայոց Բագրատունի թագավոր: 21.Մյամնա պետությունը առաջ: 22.Աշխարհի ամենամեծ մարգադաշտը: 24.Արվեստի տեսակ: 26.Փշոտ կենդանի: 27.Վրացի հայտնի բանաստեղծ Իոսեբ ...: 29.Հայոց աստվածուհի: 30.Կասկածել, երկմտել, տարակուսել: 32.Հնդկաստանի մայր գետը: 36.Հանրահայտ վրաց դերասանուհի ... Ճիաուրելի: 37.Եկեղեցական ժողով: 39.Պարի տեսակ: 40.Անտառային կենդանի: 42.Անտառում մոլորվածի կանչը: 44.Գետ Վրաստանում: 46.Ճապոնիայի դրամական միավորը: 48.Գրողի ստեղծագործությունը: 50.Անձնական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Պաշտել: 8.Անուժ: 10.Լիճո: 11.Ագա: 13.Աբուջա: 15.Կրկնել: 16.Փտում: 17.Լոտո: 19.Գիտակ: 23.Պատրաստ: 26.Սաշա: 27.Մետրո: 28.Տաշեղ: 29.Անիմա: 32.Դիող: 33.Մոզդոկ: 36.Իդա: 37.Վասն: 39.Լինց: 40.Մնար: 42.Կոթ: 43.Իստակ: 44.Նապո: 45.Լիլո: 46.Ունիա: 47.Դոն: 48.Նենեց: 49.Մուտի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Խառատ: 2.Կտրում: 3.Ըլլալ: 4.Սանկտ: 5.Էժան: 6.Գթալ: 9.Նորոգ: 12.Գետաշեն: 14.Բուլատ: 18.Կրոն: 20.Իսակով: 21.Տաշ: 22.Կաղ: 23.Պենիցիլին: 24.Տրադիցիոն: 25.Սումո: 30.Իմաստուն: 31.Ազգակից: 34.Կակադու: 35.Էնթոնի: 38.Սոպոտ: 41.Նանե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445